

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2018-1-2-Ա

ք. Երևան

07.02.2018թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2018 թվականի փետրվարի 7-ի նիստում քննարկեց 2018 թվականի հունվարի 16-ին արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ TV Entertainment Reality Network B.V. (Arendstraat 11 NL-1223 RE Hilversum) ընկերության «IN INSIGHT» (IR1312082) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված համակցված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման միջազգային գրանցման մասին ծանուցման մեջ նշված 41-րդ դասի մնացած ծառայությունների համար, քանի որ այն շփոթելու աստիճան նման է նույնատիպ ծառայությունների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «INSIGHT ANALYTICAL CENTER FOR APPLIED POLICY AND RESEARCH» («Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպություն Երևան, Վարդանանց 28/2-34, N 22968, 04.05.2015) ապրանքային նշանին, ինչպես նաև ենթակա չէ գրանցման միջազգային գրանցման մասին ծանուցման մեջ նշված նշված 35-րդ դասի ծառայությունների համար, քանի որ այն շփոթելու աստիճան նման է գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «R INSIGHTS» («Արինսայթս» ՍՊԸ Երևան, Բաշինջաղյան 191, քն. 12, N 19750, 02.05.2013, N 19751, 02.05.2013) ապրանքային

նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 133-րդ կետի համաձայն հայտարկված համակցված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, քանի որ թե՛ հայտարկված, և թե՛ համեմատվող ապրանքային նշաններում հիմնական ընկալման բառային տարրը «INSIGHT» բառն է:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն ներկայացված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է ավելի վաղ գրանցված ապրանքային նշաններին: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշաններում հիմնական ընկալման բառային տարրը «INSIGHT» բառն է:

Բողոքարկողը շարունակեց պնդել իր տեսակետը, որը ներկայացված ապրանքային նշանը կարող է գրանցվել և համագոյատևել գրանցված նշանների հետ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշումը իրավաչափ է:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Զարուհի Մանուկյանի կողմից ներկայացված՝ «IN INSIGHT» (IR1312082) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում: